ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

I SSN 1829- 3468
9 771829 346006 17031 >

**ՇԱԲԱԹ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017Թ.**
№ 31 (449)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

***Օ՜, հայրենիք դառն ու անուշ:***

*ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ*



## Արթուր Աղաբեկյանը՝ Արցախի հերոս

ԼՂՀ հռչակման 26-րդ տարեդարձի կապակցությամբ օգոստոսի 31-ին Արցախի Հանրապետության նախագահի նստավայրում տեղի է ունեցել պարգեւատրման հանդիսավոր արարողություն: Այս մասին տեղեկացնում է ԱՀ նախագահի մամուլի ծառայությունը:

«Արցախի հերոս», Արցախի Հանրապետության բարձրագույն կոչում եւ «Ոսկե արծիվ» շքանշան է շնորհվել Արթուր Աղաբեկյանին:

Պետական բարձր պարգեւներով պարգեւատրվել են Պաշտպանության բանակի զինծառայողներ, ազատամարտիկներ, Արցախի, Հայաստանի եւ արտերկրի մի խումբ պետական եւ հասարակական գործիչներ, դիվանագետներ, բարերարներ, տնտեսության, կրթության եւ մշակույթի ոլորտների ներկայացուցիչներ:

Արվեստի եւ լրագրության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար մի խումբ անձանց շնորհվել են Արցախի Հանրապետության պատվավոր կոչումներ:

Շնորհավորելով պարգեւատրվածներին՝ նախագահ Սահակյանը նշել է, որ պետությունը միշտ բարձր է գնահատում մարդկանց, ովքեր նշանակալի արդյունքների են հասել իրենց ծառայության մեջ եւ աշխատանքում՝ ի նպաստ մեր հայրենիքի:

Միջոցառմանը ներկա են եղել Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:

**armeniasputnik.am**
**31 օգոստոսի 2017**

## ԹԵՐԵԶԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. «Հասարակության շրջանում պետք է բարձրացնել քոլեջների դերը»

«Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամը միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություն է, որ հիմնադրվել է 2006թ. Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ: Մեր երկրում ներդնելով եվրոպական զարգացած երկրների առաջավոր եւ ժամանակակից փորձը՝ քոլեջը միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում նաեւ Կապանի մասնաճյուղում:

**«Եթե այս տարի հանրապետության միջին եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները հիմնականում դժգոհում են ընդունելության ցուցանիշներից, ապա մենք չենք դժգոհում: Չնայած դեռ ընդունելությունը շարունակվում է, եւ այս պահին չեմ կարող կոնկրետ թվային տվյալներ ասել, բայց բավականաչափ դիմորդներ ունենք»**, - նշեց «Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի տնօրեն Թերեզա Միքայելյանը, ով, ի դեպ, արդեն 4-րդ տարին է, ինչ ղեկավարում է այս հաստատությունը:

Հետադարձ հայացք ձգելով՝ նա նշեց, որ երբ ստանձնեց այս պաշտոնը, քոլեջի մասնաճյուղն ուներ ընդամենը 6 ուսանող, եւ բոլորը միաձայն պնդում էին դրա փակվելու մասին: **«Ասացի՝ չի փակվի, ու սկսեցինք աշխատել որակյալ ուսուցում տալու ուղղությամբ. չնայած վճարովի ուսուցում էինք կազմակերպում, բայց տարեցտարի ուսանողների թիվն ավելանում էր: 2017-18 ուստարում հատկապես 9-ամյա կրթության հիմքով ընդունվողների համար պետպատվերի**



**շրջանակներում բավականաչափ տեղեր են հատկացվել, ինչի շնորհիվ կարելի է ասել՝ ուսումը դարձել է անվճար: Ինչ վերաբերում է 12-ամյա կրթության հիմքով դիմորդներին, ապա այս տարի**

էջ 6

## Մտորումներ սեպտեմբերի 1-ի առթիվ

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում խաղաղ երկնքի տակ դիմավորեցինք եւս մեկ նոր ուսումնական տարի: Շնորհավորանքներ, ժպիտներ, ուրախության արցունքներ, ծաղիկներ, փուչիկներ, ինչու չէ նաեւ նոր հագուստ: Ողջունելի է, որ գիտելիքի տոնը վեր է ածվել համազգային, «ազգուտակային» միջոցառման, քանզի հատկապես վերջին տարիներին սիրում ենք երեխաների մանկապարտեզ, դպրոց հաճախելը, ինչու չէ նաեւ քոլեջ կամ բուհ ընդունվելն ամբողջ ցեղով տոնել: Այստեղ, իհարկե, դրականը գերակշռում է, բայց չմոռանանք, որ մեզանում երբեմն չափի զգացումը կորցնելը բերում է ավելորդ ճոխության, պճնվածության: Սեպտեմբերի 1-ին ընդառաջ ծնողների պատրաստվելու «գործընթացն» այնպիսի տպավորություն է ստեղծում, կարծես հարսանեկան կամ որեւէ այլ տոնական խնջույքի են պատրաստվում: Իհարկե, սեպտեմբերի 1-ը նույնպես տոն է, բայց չմոռանանք, որ սա նախեւառաջ գիտելիքի, գրի ու դպրության օրն է, երբ մեզանից յուրաքանչյուրը պետք է մտածի ոչ թե մի քանի րոպե ցուցադրվելու, այլ ուսուցանելու, երեխայի որակյալ կրթություն ստանալու մասին:

Ինչեւէ, չխորանանք ազգային հոգեկերտվածքի թերությունների վրա, չքննադատենք մայրիկների ոգեւորությունը, այլ նկատենք մի կարեւոր առավելություն. տարիներ առաջ, երբ հիմնականում մայր ծնողներն էին զբաղվում երեխաների կրթության, դաստիարակության հարցերով, այսօր ոգեւորությամբ նկատեցինք մեծաթիվ հայր ծնողների մասնակցությունն այդ անչափ կարեւոր գործընթացին: Սա վկայում է ինչ-որ առումով առողջ հասարակության կերտման բարդ գործընթացի մասին:

Չցանկանալով ավանդական տարբերակով ներկայացնել կոնկրետ որեւէ դպրոցի միջոցառման մանրամասները՝ պարզապես արձանագրենք, որ բոլոր դպրոցներում էլ ողջույնի խոսքեր, շնորհավորանքներ հնչեցին մարզային եւ համայնքային իշխանությունների անունից, տնօրենության կողմից, ինչպես նաեւ իրենց ողջերթի խոսքն առաջին դասարանցիներին հղեցին առավել ավագ դասարանների աշակերտները:

Առանձնահատուկ շնորհավորելով առաջին անգամ կրթական տարբեր օջախներ մուտք գործող երեխաներին, պատանիներին եւ երիտասարդներին՝ մաղթենք նրանց առողջություն, գիտելիքների անսպառ պաշար, հավատ ու համոզմունք առ այն, որ գիտելիքն իսկապես ուժ է եւ մեր բարեկեցիկ ապագայի երաշխիք: Շնորհավորենք նաեւ մանկավարժական, դասախոսական գործունեություն իրականացնող անձանց՝ ցանկանալով նրանց համբերություն, պատասխանատվության բարձր զգացում անչափ կարեւոր աշխատանքն իրականացնելու բարդ ու երկար ճանապարհին:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Զորաց քարեր. աստղադիտարա՞ն, թե՞ բնակավայր ու դամբանադաշտ

## «Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է հնագիտական արշավախմբի ղեկավար Աշոտ Փիլիպոսյանը

*Ժամանակակից Հայաստանի հարավի հնագիտական համալիրների մեջ առանձնացող մեգալիթյան հուշարձանը՝ Զորաց քարերը, շարունակում է հետաքրքրություն առաջացնել ոչ միայն հանրապետության բնակչության, այլեւ մեր երկիր այցելող զբոսաշրջիկների շրջանում:*

*Օգոստոսի 23-ից սեպտեմբերի 2-ը հուշարձանի տարածքում հերթական անգամ կատարում էին պեղումներ, ինչն էլ պատճառ դարձավ վերջին ամսում երկրորդ անգամ այցելելու Զորաց քարեր:*

*Հնագիտական արշավախումբը՝ 15 հոգուց կազմված, ղեկավարում էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական քարտուղար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը:*

*Հնագիտական արշավախմբի աշխատանքները ֆինանսավորել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն:*

*Սիսիան քաղաքից 3կմ հյուսիս գտնվող հնավայր այցելեցինք պեղումների վերջին օրը՝ սեպտեմբերի 2-ին, որտեղ էլ զրույց ունեցանք Աշոտ Փիլիպոսյանի հետ:*

***



**- Պարո՛ն Փիլիպոսյան, նախ կուզենայինք իմանալ, թե երբվանից եք զբաղվում Զորաց քարեր հուշարձանի ուսումնասիրմամբ:**

- Իմ ղեկավարած արշավախումբն առաջին անգամ այս հնավայրում աշխատել է 2014 թվականին:

2015-16թթ. հիմնականում զբաղված էինք աղբյուրագիտական, ճարտարապետական նյութեր հայթայթելով:

Հիմա էլ շարունակում ենք աշխատանքները, պեղումները կշարունակենք նաեւ հոկտեմբերին՝ երկու շաբաթով:

**- Դուք նշեցիք, որ 2015-16թթ. աղբյուրագիտական նյութերի հավաքմամբ էիք նաեւ զբաղված: Աղբյուրագիտական ի՞նչ նյութեր կարողացաք ի մի գումարել, ավելի ճիշտ՝ ի՞նչ ասել է աղբյուրագիտական նյութեր այս հուշարձանի առումով:**

- Ժողովրդական ավանդազրույցներ կան, որոնք գրի են առել Երվանդ Լալայանը (19-րդ դարավերջին), Ստեփան Լիսիցյանը (20-րդ դարի 20-30-ականներին), Մորուս Հասրաթյանը (20-րդ դարի 50-60-ականներին):

Դրանք տեղ են գտել նաեւ Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» հիմնարար աշխատության մեջ:

Ըստ ավանդազրույցների՝ մեծ քարակույտերի խորքում առաջնորդներ են թաղված, իսկ ուղղահայաց կանգնեցված հսկա քարաբեկորների տակ՝ զինվորներ: Այդ պատճառով էլ վայրը նաեւ Զորաց քարեր է կոչվում:

Ուշագրավ են հետագա շրջանի ուսումնասիրությունների արդյունքները եւս: Մորուս Հասրաթյանից հետո տարածքը հետազոտել են Օ.Խնկիկյանը, Է.Պարսամյանը, Գ.Արեշյանը, ուրիշներ (20-րդ դարի 70-80-ականներ), այնուհետեւ՝ 20-րդ դարավերջին եւ 21-րդ դարասկզբին՝ Պարիս Հերունին, ապա՝ Հ.Մարտիրոսյանը, Վ. եւ Մ. Վահրադյանները, իսկ 2010-ից հետո՝ Ա.Բոբոխյանը, Հ.Ավետիսյանը, Ա.Գնունին, Գ.Սարգսյանը…



**- Եվ, այդուհանդերձ, մեզ զարմացրել է գրավոր աղբյուրների եւ հատկապես Ստեփանոս պատմիչի, Ղեւոնդ Ալիշանի աշխատություններում այդ կապակցությամբ հիշատակությունների բացակայությունը:**

- Հուշարձանին եւ հարակից տարածքներին առնչվող գրավոր սկզբնաղբյուրների շարքում առաջինը Վանի թագավորության (Ուրարտուի) սեպագիր արձանագրություններն են: Դրանք թեեւ ուղղակի տվյալներ չեն տալիս Զորաց քարեր մեգալիթյան հուշարձանի վերաբերյալ, սակայն կարեւոր տեղեկություններ են պարունակում: Նկատի ունեմ Սարդուր 2-րդի (մ.թ.ա. 764-735թթ.) տարեգրության համապատասխան հատվածը, Սիսիանից մոտ 17 կմ արեւմուտք՝ Արեւիս գյուղից ոչ հեռու, Թանահատ վանքի ավերակներում հայտնաբերված Արգիշտի 2-րդի (մ.թ.ա. 714-685թթ.) սեպագիր արձանագրությունը, ինչպես եւ Ռուսա 2-րդի (մ.թ.ա. 685-645թթ.) Այանիսում բացված Խալդի աստծո տաճարի մուտքի արձանագրությունը:

Ինչ վերաբերում է Ստեփանոս Օրբելյանի պատմությանը կամ Ալիշանի հայտնի տեղագրությանը… Հավանաբար մ.թ. 11-13-րդ դարերում՝ սելջուկների, ապա եւ մոնղոլների աշավանքի ժամանակ, Զորաց քարերի դամբարաններն արդեն թալանված էին եւ ծառայում էին որպես ապաստարաններ՝ պաշտպանվելու համար:

Ի դեպ, Զորաց քարերի գրեթե բոլոր մեծ դամբարանները (թիվն անցնում է երեք տասնյակից) քանդված են եւ թալանված: Դրանք շրջապատված եւ ամբողջական կամ թերի պահպանված կրոմլեխներով ու կենտրոնում (հիմնականում՝ արեւելք-արեւմուտք դիրքով) գետնափոր, քարարկղային դամբանախցեր ունեն:

**- Զորաց քարեր հուշարձանի ուսումնասիրմամբ, ինչպես նշեցիք, շատերն են զբաղվել, բայց Պարիս Հերունու հետազոտությունը, նրա արտահայտած տեսակետը տարբերվում են մինչեւ հիմա եղած տեսակետների, ավանդազրույցների համապատկերի վրա:**

- Պարիս Հերունին ֆիզիկոս էր, նա կարող էր տեսակետ, կարծիք հայտնել, բայց ոչ տեսություն առաջադրել: Ընդամենը տեսակետ է հայտնել, որ հրապուրիչ է մեր ժողովրդի համար: Միայն այդքանը…

Ինչպե՞ս կարող էր ֆիզիկոսը հնագիտական նման հարցի վերաբերյալ հիմնավոր կարծիք հայտնել:

Պարիս Հերունու կարծիքը կիսում են ոչ մասնագետները. ցույց տվեք մի հնագետ, որ համաձայն է նրա հետ:

**- Մենք Հերունուն 1996 կամ 97 թվականին հանդիպեցինք այստեղ՝ Զորաց քարերում, պեղումների ժամանակ: Մեր զրույցը հրապարակվեց մարզային թերթում: Տարիներ հետո էլ «Սյունյաց երկրին» հարցազրույց տվեց գրերի գյուտի 1600-ամյակի առիթով: Այդ ժամանակներից ի վեր (միգուցե եւ ավելի վաղ ժամանակներից) նա հոդվածներ է հրապարակել, գրքեր հրատարակել (դրանք նաեւ այլ լեզուներով են թարգմանվել)՝ առաջ քաշելով իր տեսակետը՝ Զորաց քարեր հուշարձանն աստղադիտարան է եղել:**

**Մարդիկ ողջամիտ հարց են տալիս՝ ինչո՞ւ Հերունուն հնագետները չէին հերքում, հակադարձում, ընդդիմանում այն ժամանակ, երբ կենդանի էր…**

- Ինքս մի քանի անգամ մասնակցել եմ Զորաց քարերին նվիրված գիտական ժողովների, որոնց հրավիրվել է նաեւ երջանկահիշատակ Պարիս Հերունին, բայց միշտ էլ հրաժարվել է մասնակցել մասնագիտական քննարկումների:

**- Իսկ զուգահեռներն անգլիական Սթոունհենջի հետ, դա՞ էլ անհիմն է:**

- Ընդամենը մեկ ամիս առաջ ռուսական «Կուլտուրա» ալիքով ներկայացվեց երկմասանոց ֆիլմ Սթոունհենջի մասին, որտեղ խոսք անգամ չկար այդ հուշարձանի՝ աստղադիտարան լինելու տեսակետի վերաբերյալ: Ընդհակառակը՝ ներկայացրին հնագիտական տվյալներ այն մասին, որ այնտեղ՝ պեղումների ժամանակ, հայտնաբերվել են զոհված մարդու ոսկորներ, եւ այդ հուշարձանը կարեւոր ծիսական կառույց է եղել: Բացի դրանից, համացանցում այսօր տեղադրված են շատ հետաքրքիր փաստեր, թե ինչպես 20-րդ դարի 30-50-ական թվականներին վերակառուցվեց ու վերաձեւվեց Սթոունհենջը:

**- Եվ ինչո՞ւ այդչափ նմանություն կա Զորաց քարերի ու Սթոունհենջի միջեւ, ինչպե՞ս հասկանալ:**

- Երկուսն էլ մեգալիթյան հուշարձան են, երկուսն էլ կապված են թաղման ծեսի եւ ծիսական պատկերացումների որոշակի համակարգի հետ՝ այն տարբերությամբ, որ Զորաց քարեր հուշարձանը ե՛ւ բնակավայր ուներ, ե՛ւ դամբանադաշտ, իսկ Սթոունհենջում բնակավայրի հետքեր՝ ցայտուն արտահայտությամբ, չկան:

Ի դեպ, մեգալիթյան հուշարձաններ՝ տարաժամանակյա, բայց իրար նման, շատ կան աշխարհում՝ Իսպանիայից մինչեւ Կամբոջա, Թաիլանդ, Հնդկաստան, Իրան… Եվ նրանց նմանությունը չպետք է թյուրիմացության մեջ գցի մեզ:

**- Դե ուրեմն, խնդրեմ, Դուք բնութագրեք Զորաց քարեր հուշարձանը:**

- Առանց վարանելու կարող եմ ասել՝ Անդրկովկասի մեգալիթյան եզակի հուշարձաններից է. զբաղեցնում է մի քանի տասնյակ հեկտար տարածք: Հիմնական մասը գտնվում է Դառը (Դար) գետի (Որոտանի վտակներից է) ձորի ձախակողմյան քարափի բարձունքում՝ ծովի մակարդակից 1770 մ բարձրություն ունեցող սարահարթում, եւ



բաժանված է երկու մասի: Հարավային հատվածը դամբանադաշտ է, հյուսիսային մասը՝ բնակավայր, որն էլ ունի պաշտպանական պարիսպ՝ իր որմնահեցերով, հետքերն էլ պահպանված են:

էջ 8

# ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. «Նման մարզպետին իր պոստում հանդուրժելը մեծ շռայլություն է մեր երկրի համար»

*Սամվել Հարությունյանը 1992-94 թվականներին` Արցախյան պատերազմի ամենաթեժ շրջանում, գլխավորել է Գորիսի քաղաքային իշխանությունը:*

*Ակտիվ քաղաքացի է, հանրային գործիչ, անկուսակցական:*

*Վերջին երկու տարում բնակվում է Գորիսի իր առանձնատանը եւ զբաղվում է հայագիտությամբ, ընդգրկված է Գորիսի պետական համալսարանում իրականացվող «Սյունիքի հոգեւոր եւ նյութական ժառանգությունը» ծրագրում:*

*Նաեւ հասարակական գործունեությամբ է զբաղվում. նրա նախաձեռնությամբ կարգի է բերվում Գորիս գյուղի հին գերեզմանատունը, որտեղ ամփոփված են մեր արժանավոր նախնիների աճյունները: Այդտեղ է հանգչում նաեւ Գորիսի մելիքական տներից մեկի նշանավոր ներկայացուցիչ, Գորիս քաղաքի հիմնադիր քաղաքապետ (1870 թվականից) Մանուչար բեկ Մելիք-Հյուսեինյանը:*

*Գրեթե ամեն առավոտ հասցնում է շրջագայել քաղաքամերձ տարածքներում` վայելելով հրաշք բնաշխարհի գեղեցկությունը:*

*Սամվել Հարությունյանին հանդիպեցինք օգոստոսի 26-ին գորիսյան առանձնատանը, հյուրասիրվեցինք իր իսկ ձեռքով հավաքած հատապտուղներով, տնամերձի բերք ու բարիքով:*

*«Սյունյաց երկրին» հետաքրքրում էր նրա վերաբերմունքը մարզպետարան-Գորիս շարունակվող «սառը պատերազմին»: Իսկ Սամվել Հարությունյանը սովորաբար նկատում է այն, ինչ շատերը չեն տեսնում եւ պերճախոս խոսքով ասում է այն, ինչ քչերն են ասում:*

*Զրույցի վերջում չէինք կարող թաքցնել մեր նկատառումը, որ նոր չէ եւ արդիական է` նման մտավորականի, ակտիվ քաղաքացու, Սյունիքի մարզի հոգսերով ապրող մարդու ներուժը չենք օգտագործում, որը եղել եւ մնում է բացթողում:*

*Ի՞նչ ասաց Սամվել Հարությունյանը մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ:*

***



Սյունիքի մարզպետի` Գորիսից օտարված, մեկուսացված վիճակը ոչ թե բացասական, այլ արգահատելի, մերժելի եւ անընդունելի երեւույթ է:

Հետաքրքիր է` պետական որեւէ ատյան փորձե՞լ է պարզել դրա պատճառները, փորձե՞լ է դարձի բերել մարզպետին:

Անշուշտ, կարելի է զբաղեցնել պետական պաշտոն եւ ինչ-որ մեկի անձը սիրել կամ չսիրել, բայց դա երբեք չպետք է անդրադառնա պետական գործառույթներին, առօրյա աշխատանքին: Իսկ երբ անձնական նկատառումներով փորձում են հարաբերվել գործընկերների, այս դեպքում` համայնքի ղեկավարների հետ, ապա դա մի ամբողջ համայնքի արժանապատվության ոտնահարում է նշանակում, որն արդարացում չի կարող ունենալ:

Իշխանավորն առհասարակ օրինակ պետք է ծառայի մեծահոգությամբ, վրիժառությունը մերժող վերաբերմունքով, անձնական հույզերը, շահերը պետական հարցերին ստորադասելու կամքով եւ վճռականությամբ: Սյունիքի պարագայում գործ ունենք դրա ուղիղ հակառակ իրողությունների հետ:

Ես լսել եմ վարչապետի սյունիքյան վերջին այցի մասին եւ ապշել:

Չեմ հիշում որեւէ դեպք (նաեւ խորհրդային ժամանակներից), որ հանրապետության ղեկավարը կամ կառավարության ղեկավարն այցելեր Սյունիք-Զանգեզուր, քննարկեր տարածաշրջանի հետ կապված հարցեր, բայց դրանց մասնակից չդարձներ Գորիսի ու Կապանի ղեկավարներին:

Երբեւէ չենք պատկերացրել կամ տեսել մի վիճակ, որ Կարեն Դեմիրճյանը կամ Անտոն Քոչինյանը գային Սյունիք` տարածաշրջանին առնչվող ինչ-որ հարցեր քննարկելու, եւ այդ քննարկումներին մասնակից չդարձնեին Ռաֆիկ Մինասյանին կամ Արամ Հարությունյանին, վերջում էլ հայտարարեին, թե կատակով են վերաբերվում մարդկանց մտահոգություններին…

Այնպես որ` մերօրյա Սյունիքին առնչվող հարցեր քննարկել առանց Գորիսի ու Կապանի ընտրյալ իշխանապետերի` առնվազն անհեթեթություն է եւ պարզունակ ներկայացում:

Դա ամենեւին էլ անձերի խնդիր չէ, ինչպես ոմանք են փորձում այդպես ներկայացնել: Ես այլ կերպ եմ ընկալում` կամ վարչապետն իր այցին լուրջ չի վերաբերվել ու նշանակություն չի տվել կամ ինքն աղոտ է պատկերացնում տեղական ինքնակառավարման մարմինների տեղն ու դերը մեր պետական, սահմանադրական կարգում:

Ինչ վերաբերում է մարզպետին… եթե մարզպետն իրոք Սյունիքի մարզպետը լիներ, եթե նրա համար Սյունիքի արժանապատվությունն արժեք ունենար, ապա կիրաժարվեր այդ խորհրդակցությանը մասնակցելուց, քանի դեռ չի ապահովվել Գորիսի ու Կապանի համայնքապետերի ներկայությունը:

Անձամբ ես չէի հանդուրժի նման վերաբերմունքը:

1992-ի ամառվա լարված օրերին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն այցելեց Սյունիք եւ Տաթեւով մեկնեց Կապան` առանց Գորիս մտնելու, առանց Գորիսի իշխանություններին տեղյակ պահելու:

Մի քանի օր հետո նախագահի վերաբերմունքն իմ կողմից խիստ քննադատության ենթարկվեց կառավարության նիստում եւ պատշաճ գնահատականի արժանացավ:

Սիսիանյան խնդրահարույց խորհր-դակցության ձեւաչափին նույնպես պիտի գնահատական տրվեր: Դա փոքրիկ բացթողում չէր, դա ոչ մի քննադատության չդիմացող երեւույթ էր:

Կրկնում եմ` խոսքը ոչ թե ինչ-որ անձերի մասին է, այլ մեր` սյունիքյան հավաքական արժանապատվության ոտնահարման մասին:

Տպավորություն ունեմ, որ գործող մարզպետին հաճո են միայն ու միայն ծայրահեղ հնազանդ ու հպատակ, սեփական կարծիք եւ դեմք չունեցող համայնքապետերը, պաշտոնյաները, անհատները…

Նման մարզպետին իր պոստում հանդուրժելը մեծ շռայլություն է մեր երկրի համար:

Ես ընդհանրապես դեմ եմ տեղային մտածելակերպին, բայց եւ կարծում եմ` յուրաքանչյուր մարզ պետք է ղեկավարի տեղացի կադրը: Նման մոտեցումը հատկապես պարտադիր է Սյունիքի մարզի համար: Ավելին` ռազմավարական բացառիկ նշանակություն ունեցող Սյունիքի մարզի ղեկավարը պետք է լինի արժանավոր սյունեցի, ինչպես եղել է դարեր շարունակ: Այդ ճշմարտությունն ընդունել են հայոց արքաները եւ նույնիսկ օտար տերությունները, որ ժամանակավորապես նվաճել են մեր երկրամասը` սելջուկներից մինչեւ թաթարներ, պարսիկներից ու թուրքերից մինչեւ ռուսներ…

Սյունիքում ե՛ւ նախկինում, ե՛ւ հիմա ղեկավար կադրերի պակաս չի եղել ու չկա: Սյունիքի կադրերը միշտ էլ առաջատար տեղ են զբաղեցրել հայոց կադրային բանկում: Իսկ հիմա… Մարզպետը` դրսից, խոշոր տնտեսությունների ղեկավարները` դրսից, ուժային կառույցների ղեկավարները` դրսից, իրավապահ մարմինների ղեկավարները` դրսից…

Մեր լավագույնները չեն նահատակվել այն բանի համար, որ իրենց հաջորդները` երկրամասի զավակները, սեփական փոքր հայրենիքում անարժան համարվեն ղեկավար պոստեր զբաղեցնելու հարցում:

Ամոթալի, մերժելի այս երեւույթը պետք է վերանայվի:

Վտանգ կա, որ այսկերպ շարունակվելու դեպքում մեր երկրամասն ախոռ կդառնա: Հիշենք Գարեգին Նժդեհի մարգարեական զգուշացումը` «Ախոռը, ուր անասուններն ուտում են եւ պառկում, հայրենիք չէ»:

Կրկնում եմ` Սյունիքի հանդեպ այդ մոտեցումը պետք է վերանայվի: Հակառակ պարագայում արժանապատվություն ունեցող եւ պատասխանատվության զգացումով առաջնորդվող սյունեցիները ոչ միայն իրավունք, այլեւ պարտականություն կունենան ընդվզել նման երեւույթների դեմ…

Սյունիքի արժանապատվության պահպանման խնդիրը դարձել է մեր օրերի թիվ մեկ խնդիրը մարզում: Այդ խնդրի լուծմանը նախեւառաջ պետք է լծվեն ընտրովի պաշտոնյաները` պատգամավորներ, համայնքների ղեկավարներ, տնօրեններ, ավագանու անդամներ, քանի որ իրենք օժտված են ժողովրդի մանդատով:

Այդ հարցում մեծ անելիք ունի մտավորականությունը, բայց… Ըստ Ալեքսանդր Սոլժենիցինի` մտավորականի թիվ մեկ հատկանիշը սեփական կարծիք ունենալն ու դրանով առաջնորդվելն է: Իսկ քանի՞ նման մտավորական ունենք մարզում: Բանը նրան է հասել, որ իրենք` մարզի մտավորականներն այսօր պաշտպանվելու կարիք ունեն, քանի որ հետեւողականորեն լուսանցք են մղվում` ինչ-որ պատահականների անձնական նկատառումներից ելնելով:

Հավատացեք, ոչ մեկն իմ անձնական թշնամին չէ, ոչ մեկի համար փաստաբան չեմ, բայց մեր բռնած ճանապարհը ոչ մի տեղ տանող ուղի է:

Այնքա՜ն քիչ բան է ուզում սյունեցին` իր երկրամասում հաճույքով ապրելու, աշխատելու հնարավորություն, իր գիտելիքներն ու կարելիությունները դրսեւորելու ասպարեզ, այդ ամենն ի նպաստ Սյունիքի, ի նպաստ Հայաստանի Հանրապետության ծառայեցնելու հնարավորություն…

Այնպես որ` ապավինենք Սյունյաց ոգուն եւ արժանապատվությանը:

**ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Կրթության վարչության պետի ոդիսականը…

Շուտով երկու ամիս է, ինչ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնը թափուր է:

Վարչության վերջին ղեկավարը վաստակաշատ Հովիկ Ալեքսանյանն էր, ով աշխատանքից ազատվեց անձնական դիմումի համաձայն (համենայն դեպս ինքն այդպես է ներկայացնում իր պաշտոնանկությունը, թող այդպես էլ ներկայացնի):

Եվ նոր ուսումնական տարվա նախապատրաստության ամենաբուռն շրջանում մարզպետարանի կրթության վարչությունը ղեկավար չունեցավ:

Բայց վարչությունում կա նաեւ կրթության բաժին, որը վարում է



Հայկ Հարությունյանը, ով էլ, ըստ էության, ժամանակավորապես փոխարինում է վարչության պետին: Նա էլ, պարզվում է, կրթության գործերին առնչվում է այնքանով, որքանով… Ու այնքա՜ն ձեւական է երիտասարդի կարգավիճակը, որ մարզի ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում խոսք ասելու իրավունք չստացավ:

Ասել է թե` ամփոփվեց մարզի հանրակրթական դպրոցների մեկ տարվա գործունեությունը, նախանշվեցին գալիք տարվա անելիքները, բայց առանց այդ ոլորտի պատասխանատու օղակի` առանց կրթության վարչության:

Կարելի է պատկերացնել, թե ինչի կվերածվեր այդ ժողովը, եթե ներկա չլիներ կրթության եւ գիտության պատկառազդու նախարար Լեւոն Մկրտչյանը:

Չլինի՞ թե կրթության վարչությունն այնքան էլ կապ չունի հանրակրթական դպրոցների գործունեության հետ, չէ՞ որ դպրոցը ՊՈԱԿ է, իսկ տնօրենը` լայն լիազորություններով օժտված պաշտոնյա, կրթական քաղաքականությունն էլ նախարարությունն է մշակում…

Եթե նույնիսկ այդպես է, ապա որեւէ ողջամիտ բացատրություն չունի մարզպետարանի կրթության վարչության պետի պաշտոնը տեւական ժամանակ թափուր թողնելը:

էջ 7

# ԱՆԺԵԼԱ ՄԱՔՅԱՆ. «Մատչելի, հասանելի, որակյալ մասնագիտական կրթությունը՝ բարեկեցության եւ արժանապատիվ ապագայի երաշխիք»



«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ստեղծվել է 1995թ. Կապանի (Ղափանի) շինարարական (1958թ.) եւ Լեռնամետալուրգիական (1959թ.) տեխնիկումների հիմքի վրա՝ միավորվելով որպես Կապանի ճարտարագիտատնտեսագիտական տեխնիկում: ՀՀ կառավարության որոշմամբ 1997թ. քոլեջը վերակազմավորվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի (կրթահամալիրի) քոլեջի: 2002թ. ՀՀ կառավարության հունիսի 20-ի թիվ 1009-Ն որոշմամբ այն վերակազմակերպվել է «Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն: 2012թ. քոլեջը վերակազմակերպվել է «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջը, մարզում լինելով միակ բազմագործառութային միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը, նշանակալի դեր է խաղում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ նպաստելով մասնագիտական կրթության զարգացմանը: **«Հանրապետության տարածաշրջանային պետական քոլեջները ոչ միայն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ են, այլեւ աջակցում տարածաշրջանի մասնագիտական կրթություն իրականացնող այլ ուսումնական հաստատություններին թե՛ մեթոդական ձեռնարկներով, թե՛ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելով, թե՛ փորձի փոխանակմամբ, սերտորեն համագործակցում նրանց հետ: Այս քոլեջներն ունեն հարուստ նյութատեխնիկական բազա, ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիաներ, արհեստանոցներ, լսարաններ եւ կաբինետներ, որոնք հնարավորություն են տալիս մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան»,** - նշեց Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Անժելա Մաքյանը՝ հավելելով, որ քոլեջում կրթությունն իրականացվում է պետական կրթական չափորոշիչներով՝ մոդուլային ուսուցման համակարգով:

2017-18 ուստարվա ընդունելությունը քոլեջում իրականացվել է հետեւյալ մասնագիտությունների (որակավորման) գծով. միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ Բաց լեռնային աշխատանքներ (որակ.՝ Լեռնային տեխնիկ-տեխնոլոգ՝ բաց լեռնային աշխատանքների, առկա, հեռակա, 9-ամյա, 12-ամյա կրթության հիմքով), Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում ավտոտրանսպորտում (Տեխնիկ-կարգավար՝ ավտոտրանսպորտում փոխադրումների կազմակերպման եւ կառավարման, առկա, հեռակա, 9-ամյա, 12-ամյա կրթության հիմքով), Շենքերի եւ կառույցների շինարարություն եւ շահագործում (Տեխնիկ՝ շենքերի եւ շինարարության եւ շահագործման, առկա, 9-ամյա կրթության հիմքով), Էլեկտրական կայաններ, ցանցեր եւ համակարգեր (Տեխնիկ՝ էլեկտրական կայանների, ցանցերի եւ համակարգերի շահագործման եւ տեխնիկական սպասարկման, առկա, 12-ամյա կրթության հիմքով), Կապի ցանցեր եւ հաղորդակցման համակարգեր (Տեխնիկ՝ կապի ցանցերի եւ հաղորդակցման համակարգերի շահագործման եւ տեխնիկական սպասարկման, առկա, 12-ամյա կրթության հիմքով), Հաշվապահական հաշվառում (Հաշվապահ, առկա, հեռակա, 12-ամյա կրթության հիմքով), Նախադպրոցական կրթություն (Դաստիարակ՝ նախադպրոցական կրթության, առկա, հեռակա, 12-ամյա կրթության հիմքով), իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով՝ 9-ամյա կրթության հիմքով՝ Կապի սարքավորումների մոնտաժում եւ շահագործում (Էլեկտրամոնտաժող՝ էլեկտրակապի եւ լարային հաղորդումների գծային կառույցների), Համակարգիչների շահագործում (Օպերատոր՝ համակարգչի), Տրանսպորտային միջոցների շահագործում (Փականագործ՝ ավտոմոբիլային տրանսպորտի նորոգման), Օգտակար հանածոների հարստացում (Օպերատոր՝ հանքաքարի հարստացման կայանքի):

**«Մասնագիտություններն ընտրում ենք՝ նախեւառաջ հաշվի առնելով տարածաշրջանի զարգացման հեռանկարներն ու աշխատաշուկայի պահանջները: Դրանց արդիականության ապացույցը մեր շրջանավարտների զբաղվածության ցուցանիշներն են, ընդ որում՝ հիմնականում իրենց մասնագիտությամբ: Այս ուստարում ներդրել ենք մեր ժամանակներում մեծ պահանջարկ ունեցող համակարգչային օպերատոր որակավորմամբ մասնագիտությունը: Ճիշտ մասնագիտություն ընտրելու համար ոչ միայն կարեւոր են ընտանիքի, միջավայրի գործոնները, այլեւ սովորողի նախասիրությունները, գիտելիքները, մասնագիտության պահանջարկն ու ընտրած մասնագիտությամբ աշխատանք գտնելու հնարավորությունները»,** - նշեց Անժելա Մաքյանը՝ հավելելով, որ մասնագիտություններ կան, որոնց փոփոխության ուղղությամբ արդեն իսկ մտածում են, քանի որ դրանց նկատմամբ հետաքրքրությունը նվազել է: Հետաքրքիր մի երեւույթ էլ է նկատվում. որոշ մասնագիտությունների գծով մեծ թվով դիմորդներ ունենալուն զուգահեռ, օրինակ, «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության գծով դիմորդներ չունեն: Սա, ըստ Ա.Մաքյանի, վկայում է այս մասնագիտության հեռանկարները լիարժեք չպատկերացնելու մասին:

Ինչ վերաբերում է բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին, ապա այստեղ օրինաչափություն կարելի է նկատել. հիմնականում 12-ամյա կրթության հիմքով ուսանողները, հատկապես նրանք, ովքեր արդեն իսկ աշխատում են այդ մասնագիտությամբ, ավելի են գիտակցում մասնագիտական կրթության՝ գիտելիք-հմտություն-կարողություն ձեռք բերելու արժեքը եւ լավ են սովորում:

**«Մասնագիտական կրթական բոլոր ծրագրերն իրենց որակավորմամբ համապատասխանում են գործատուների եւ աշխատաշուկայի պահանջներին: Դրանք ամեն տարի վերանայվում են, համապատասխանեցվում գործատուների պահանջներին եւ արտադրական նոր տեխնոլոգիաներին: Օրինակ՝ եթե ԶՊՄԿ-ի բաց հանքում ներդրվել են հորատման նոր հաստոցներ, նշանակում է քոլեջում այս մասնագիտությամբ կրթական ծրագիրը պետք է կազմակերպվի արտադրության նորարարական տեխնոլոգիաներին համապատասխան»,** - նշեց քոլեջի տնօրենը:

Ինչպես փաստեց Անժելա Մաքյանը, համագործակցում են քաղաքի տարբեր գործատուների հետ, եւ նա չի կիսում այն տեսակետը, որ մասնավոր սեկտորը դժվարությամբ է մասնակցում ուսումնական գործընթացների կազմակերպմանը. **«Մեր քոլեջում չկա գործատու-ուսումնական հաստատություն անջրպետը, քանի որ մեր տարածաշրջանի գործատուներից ոմանք կառավարման խորհրդի անդամներ են, պետական որակավորման հանձնաժողովի նախագահներ, ովքեր հետաքրքրված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմամբ, շահագրգռված՝ որակյալ մասնագետների պատրաստմամբ»:**

Քոլեջը պայմանագրային հիմունքներով համագործակցում է «Կապանի լեռնահարստացման կոմբինատ», «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», «Արդշինբանկ» (Կապան» մասնաճյուղ), «Կապանի բեռնաուղեւորատար ավտոտրանսպորտ», «Արմենթել» (Կապանի տարածքային բաժին), «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («Տաթեւ» մասնաճյուղ) ՓԲԸ-ների, Կապանի «Ագրոսպասարկում», «Կապանի նորոգշին» ԲԲԸ-ների, «Զագեձոր» ՍՊԸ-ի հետ: Սերտ համագործակցություն են իրականացնում նաեւ Կապանի համայնքապետարանի, հանրակրթական դպրոցների, զբաղվածության տարածքային կենտրոնի հետ:

**«Նշված հիմնարկ-ձեռնարկություններում համապատասխան մասնագետների ղեկավարությամբ անցկացնելով իրենց արտադրական եւ նախաավարտական պրակտիկաները՝ ուսանողները հնարավորություն են ստանում անմիջապես շփվել գործարար միջավայրի հետ, ստացած գիտելիքներն ու հմտությունները կիրառել արտադրության մեջ: Բացի դրանից՝ պրակտիկայի ընթացքում ուսանողը գիտակցում է իր մասնագիտության իրական արժեքը, դրա կարեւորությունն ու պահանջարկը»,** - նշեց Ա.Մաքյանը: Ինչ վերաբերում է Կապանի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ համագործակցությանը, ապա դրա շնորհիվ քոլեջում կազմակերպվում են կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստման դասընթացներ աշխատանք փնտրող քաղաքացիների համար: Վորլդ վիժնի Կապանի տարածքային զարգացման ծրագրի հետ համագործակցություն է ծավալվել Սյունիքի մարզի հանրակրթական եւ ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման տեղեկատվական հանդիպումների եւ դասընթացների կազմակերպման, մարզի ՄԿՈՒ հաստատություններում իրականացվող մասնագիտությունների, որակավորումների, կրթական հնարավորությունների մասին գունավոր տպագրության հրատարակման նպատակով:

Քոլեջի համագործակցությունը «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի հետ նույնպես իր զգալի արդյունքներն է տվել: Հիմնադրամի ֆինանսավորմամբ այստեղ ստեղծվել են ժամանակակից կահավորմամբ վարսավիրական, կարի, խոհարարական արհեստանոցներ, որտեղ անց են կացվում մասնագիտական ուսուցման կարճաժամկետ դասընթացներ:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ուսումնական հաստատություն նախեւառաջ իր մասնագիտական կադրերով կարող է առաջատար լինել: Ա.Մաքյանի հավաստմամբ՝ այսօր քոլեջն ունի մասնագիտորեն եւ մեթոդաբանորեն վերապատրաստված բարձրագույն կրթությամբ դասախոսներ: 2016-17 ուստարվա դրությամբ քոլեջի 22 դասախոսից 7 հոգի ունեն մագիստրոսի կոչում, արհեստագործական ուսուցման վարպետները ժամանակին աշխատել են արտադրությունում, եղել իրենց գործի լավագույն մասնագետները, իսկ հանրակրթական առարկաներ դասավանդող բոլոր դասախոսներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն եւ մանկավարժի համապատասխան որակավորում: **«Մասնագետների կարիք միշտ էլ ունենում ենք, այս ընթացքում համալրվել ենք երիտասարդ կադրերով: Ընդհանրապես նոր մասնագիտություն ներդնելուց, ուսուցանելուց առնվազն մեկ տարի առաջ սկսում ենք նախապատրաստական աշխատանքներ՝ աշխատաշուկայում այդ մասնագիտության պահանջարկի ուսումնասիրման, համապատասխան մասնագետներ գտնելու, նրանց վերապատրաստելու, փորձաշրջան կազմակերպելու նպատակով»,** - նշեց քոլեջի տնօրենը:

Բնական է, որ գործող յուրաքանչյուր հաստատություն ունի իր խնդիրները, որոնց լուծումը պայմանավորվում է տարբեր գործոններով: «Աջակցություն Հայաստանի պետական բյուջեին» ծրագրի շրջանակներում (խմբ.՝ նմանատիպ աշխատանքներ իրականացվել են հանրապետության բոլոր տարածաշրջանային քոլեջներում) հիմնանորոգվել են տարածաշրջանային քոլեջները՝ բացառիկ առավելություններ եւ նոր հնարավորություններ շնորհելով քոլեջին: **«Սակայն մեր քոլեջում անավարտ են մնացել շինարարական աշխատանքները՝ նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու մասով միայն, այսինքն՝ նախատեսվել էր մասնաշենքից դուրս կառուցել չորս արհեստանոց, որ դեռեւս իրականություն չի դարձել** »: Խնդիրներից մեկն էլ մարզադահլիճի վերանորոգման բացասական հետեւանքներով է պայմանավորված: Վթարային մարզադահլիճի պատճառով եղանակային լավ պայմանների դեպքում ֆիզկուլտուրայի պարապմունքներն անց են կացվում մասնաշենքի տարածքում կառուցված սպորտային հրապարակում եւ հարմարեցված սրահներում, որոնք ապահովված են ժամանակակից մարզական գույքով, իսկ անբարենպաստ եղանակներին՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի մարզադահլիճում: Հարկ ենք համարում նշել նաեւ քոլեջում գործող «ԱՐՄԱԹ» ինժեներական լաբորատորիայի մասին, որտեղ անվճար դասընթացներ են կազմակերպվում տարիքային տարբեր խմբերի սովորողների համար:

Ինչպես տեղեկացրեց Անժելա Մաքյանը, տվյալ ուստարվա ընդունելության արդյունքներն ամփոփվում են երկու փուլով՝ օգոստոսի 25-ին եւ 31-ին: Օգոստոսի 25-ի դրությամբ (խմբ.՝ այդ օրն ենք վարել հարցազրույցը) քոլեջն ուներ 121 դիմորդ՝ 43-ը՝ նախնական, 78-ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորելու համար: Այս ուստարի բավականին ավելացել են անվճար ուսուցման համար նախատեսված տեղերը. մինչեւ 19 տարեկան 9-ամյա կրթության հիմքով դիմորդների համար միջին եւ նախնական /արհեստագործական/ մասնագիտական կրթությունը կազմակերպվում է անվճար, իսկ 19 տարեկան եւ ավելի տարիք ունեցող 9-ամյա կրթության հիմքով դիմորդների համար ուսուցումն անվճար է, եթե առկա են թափուր տեղեր:**«Անցյալ ուստարում սեպտեմբերի 2-ի դրությամբ ունեինք 128 դիմորդ:**

էջ 7

# ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ. «Գորիսի պետական քոլեջում սովորել կամեցողները հիմա ավելի շատ են, քան՝ նախորդ տարիներին»

*«Սյունյաց երկիրը» շարունակում է անդրադառնալ մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների նոր համալրման արդյունքներին, ինչպես եւ միջին մասնագիտական ու արհեստագործական կրթական հաստատությունների ընդունելության ընթացքին:*

*Արդեն հանդիպում-հարցազրույց ենք ունեցել Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արթուր Կոստանդյանի, Սիսիանի պետական քոլեջի տնօրեն Վարոս Սիմոնյանի հետ:*

*Հերթական հանդիպում-զրույցը Գորիսի պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանի հետ է:*

***

**- Պարո՛ն Լազարյան, նախ՝ գնահատեք, խնդրեմ, 2017-18 ուսումնական տարվա ընդունելության ընթացքը Ձեր գլխավորած հաստատությունում:**

- Մի քանի օր է մնացել մինչեւ նոր ուսումնական տարի: Պատրաստվում ենք բոլոր ուղղություններով: Գլխավոր հարցը, այդուհանդերձ, ընդունելությունն է:

Ընթանում է նորմալ, բնականոն հունով: Դեռեւս հուլիսի 12-ին կազմավորվել է ընդունելության հանձնաժողով, որն աշխատում է ամեն օր՝ ժամը 8.30-ից մինչեւ 16.00 (շաբաթ եւ կիրակի օրերից բացի):

Նաեւ մասնագիտական կողմնորոշմանը միտված աշխատանք ենք տանում հանրակրթական դպրոցների շրջանավարտների այն խմբի հետ, որ դեռ չի կողմնորոշվել կամ նոր-նոր է կողմնորոշվում: Ավելի ճիշտ՝ ամիսներ առաջ սկսած այդ գործը շարունակում ենք՝ բնակավայրեր այցելելով, անհատական հանդիպումներ ունենալով, լրատվամիջոցների, սոցիալական ցանցերի գովազդային հնարավորություններն օգտագործելով:

**- Տեղյակ ենք, որ քոլեջում ուսուցումը կատարվում է և՛ միջին մասնագիտական, և՛ արհեստագործական կրթական ծրագրերով:**

**Հետաքրքիր է՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ի՞նչ մասնագիտությունների համար եք ներկայումս ընդունելություն կատարում եւ կրթական ի՞նչ հիմքով:**

- Թվարկեմ՝ Նախադպրոցական կրթություն (կրթական հիմքը՝ լրիվ միջնակարգ կրթություն), Դեղագործություն (կրթական հիմքը՝ և՛ հիմնական, և՛ լրիվ միջնակարգ կրթություն), Քույրական գործ (և՛ հիմնական, և՛ լրիվ միջնակարգ կրթական հիմքով), Մանկաբարձական գործ (և՛ հիմնական, և՛ լրիվ միջնակարգ կրթական հիմքով), Դիզայն (հիմքը՝ լրիվ միջնակարգ կրթություն), Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (և՛ հիմնական, և՛ լրիվ միջնակարգ կրթական հիմքով):

**- Իսկ ի՞նչ կասեք նախնական մասնագիտական (արհեստագործական) մասնագիտությունների մասին:**

- Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ (հիմքը՝ հիմնական կրթություն), Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում (հիմքը՝ միջնակարգ կրթություն), Խոհարարական գործ (հիմքը՝ միջնակարգ կրթություն), Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմքը՝ հիմնական կրթություն), Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ (հիմքը՝ հիմնական կրթություն), Գեղանկարչություն եւ քանդակագործություն (հիմքը՝ հիմնական կրթություն):

**- Իհարկե, հիմա վաղ է ամփոփել ընդունելության վերջնական արդյունքները, ընդհանրացումներ կատարել, բայց մեկ-երկու հարց կուզենայինք ճշտել:**

**Մեր պատկերացրած կոնկուրս կլինի՞ որեւէ մասնագիտության գծով, թե՞ մի կերպ եք համալրում խմբերը:**

- Հավանաբար կոնկուրս կլինի բժշկական մասնագիտությունների գծով. նկատի ունեմ հիմնական կրթական հիմքով ընդունելությունը:

**- Դիմորդները միայն Գորիսի տարածաշրջանի՞ց են, թե՞ մերձակա շրջաններից եւս:**

- Չէ, ինչո՞ւ միայն Գորիսից: Արդեն իսկ դիմորդներ ունենք Եղեգնաձորից, Մեղրիից, Սիսիանից, Արցախի Հանրապետությունից: Առկա սովորողների մեջ ուսանող ունենք Արարատի մարզից:

**- Եթե գաղտնիք չէ՝ որքա՞ն դիմորդ ունեք այս պահին:**

- Հատկապես այդ հարցում որեւէ գաղտնիք կամ խորհրդավորություն լինել չի կարող. օգոստոսի 15-ի դրությամբ ունենք 80 դիմորդ:

Եթե համեմատում ենք տարածաշրջանի շրջանավարտների ներկայիս թիվն ու դիմորդների քանակը եւ դրանք համադրում նախորդ տարիների թվերի հետ, ապա կարելի է արձանագրել՝ Գորիսի պետական քոլեջում սովորել կամեցողները հիմա ավելի շատ են, քան՝ նախորդ տարիներին:

Բայց դրանք, թույլ տվեք ասել, սովորական ցուցանիշներ չեն: Այդ թվերը վերստին հաստատում են՝ տարածաշրջանի հանրությունը մեծ վստահությամբ եւ հավատով է վերաբերվում Գորիսի պետական քոլեջին:

Բարձրագույն եւ միջին մասնագիտական ու արհեստագործական կրթական հաստատությունների ներկայիս մեծ ցանցի առկայության պարագայում դա ուղղակի գնահատական է՝ անքննելի, անվիճարկելի:



**- Ընդունելության կանոններում կա՞ն էական, սկզբունքային փոփոխություններ:**

- Ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2012թ. ապրիլի 5-ի N254-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն: Կան որոշ փոփոխություններ՝ կարգից բխող, որոնք ի շահ ուսանողի են:

Օրինակ, ուսման վճարների մուծման կարգը… Նախկինում ուսման վճարը տալիս էին ըստ կիսամյակների, երբեմն վճարները գանձում էինք նույնիսկ փաստաթղթերը հանձնելուն զուգահեռ՝ ուսանողի հնարավոր անվճարունակությունից բխող հետագա խնդիրներից խուսափելու համար: Հիմա վճարը կբաժանվի տվյալ ուսումնական տարվա ամիսների վրա եւ կվճարվի ըստ ամիսների: Հատկապես անապահով ընտանիքների համար սա կարեւոր նորույթ է:

**- Որքանով տեղյակ ենք՝ փոփոխություններ կան նաեւ պետության կողմից ուսման վճարների լրիվ փոխհատուցման կարգում:**

- Այո, այս տարի հունիսի 29-ին հանրապետության կառավարությունը N749-Ն որոշմամբ փոփոխություններ է կատարել գործող կարգում:

Ուշագրավ է հատկապես հետեւյալ դրույթը՝ «Պետությունն ուսանողական նպաստի ձեւով, մրցութային հիմունքով, ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար հատկացված անվճար ուսուցման տեղում՝ 1) մինչեւ 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության ընդունելության կարգով ընդունված ուսանողի՝ մինչեւ ուսումնառության ավարտը»:

**- Իսկ ինչպե՞ս է ընդունելությունն իրականացվում քոլեջում՝ մրցույթո՞վ, թե՞ քննությամբ:**

- Ե՛վ քննությամբ, և՛ մրցույթով: Քննություն հանձնում են բժշկական մասնագիտությամբ ընդունվել ցանկացողները, մնացած բաժիններում՝ մրցույթով:

**- Դուք քիչ առաջ ներկայացրիք մասնագիտությունները, որոնց համար 2017-18 ուսումնական տարվա համար ընդունելություն է կազմակերպվում: Դրանցից որո՞նք են նորը:**

- Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ (նախնական մասնագիտական կրթական ծրագրով) ու Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (միջին մասնագիտական կրթական ծրագրով): Վերջին մասնագիտությունը տարիներ շարունակ ունեցել ենք, բայց լրիվ միջնակարգ կրթական հիմքով, իսկ հիմա ընդունվել կարող են նաեւ հիմնական կրթական հիմքով:

Ինչ վերաբերում է Մետաղների մշակման տեխնոլոգիային, որ մեր իմացած դարբնությունն է… Փորձում ենք վերականգնել ազգային արհեստներից այդ մեկը եւս, որ գրեթե մոռացվել ու դուրս է մղվել: Սակայն այդ նորությունը, կարծես, ժամանակին պատշաճ ձեւով չներկայացրինք հանրությանը եւ բացասական արդյունքներն արդեն իսկ տեսնում ենք:

**- Նախկինում էլ, որքանով հիշում ենք, որոշ մասնագիտություններ քոլեջում չկայացան:**

- Ճիշտ եք, զբոսաշրջությունը, թեեւ առաջին հայացքից պահանջված պիտի լիներ, չկայացավ, ու հրաժարվեցինք: «Դիզայն» մասնագիտությունն էլ դժվար է ստացվում: Տեսնենք…

**- Հիմա հանրակրթական դպրոցների շրջանավարտների ծնողներին, երբ գալիս է իրենց երեխաների հետագա կրթության ընթացքը որոշելու պահը, շատ հարցեր են հետաքրքրում: Հատկապես՝ ուսման վարձավճարի չափը, արտոնությունները:**

- Ուսման վարձավճարի չափի առումով փոփոխություն չկա արդեն մի քանի տարի շարունակ: Բայց կան մասնագիտություններ, որ անվճար տեղերի հետ մեկտեղ այլեւս վճարովի տեղեր ունենք (նախկինում չեն եղել):

Արտոնությունների մասին… Արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձինք, 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամներն ու հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք, զոհված զինծառայողների երեխաները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձինք, սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողները…

Իհարկե, գործում է նաեւ փոխատեղման կարգը՝ ըստ մասնագիտությունների (ուսումնական տարին սկսելուն նախորդող եւ հաջորդող երկու շաբաթվա ընթացքում), որը չի վերաբերում արտոնություն ունեցող վերոնշյալ սոցիալական խմբերին:

**- Երբ նայում ենք բուհերի ընդունելության արդյունքներին՝ ինչ-որ առումով մտահոգող վիճակագրության ենք բախվում: Պատճառներից գլխավորն այլեւս գաղտնիք չէ՝ մարդկային ռեսուրսի նվազում կամ, ինչպես ընդունված է ասել, ժողովրդագրական իրավիճակի փոփոխություն:**

**Կարելի՞ է փաստել, որ Գորիսի պետական քոլեջը դիմանում է ոչ սովորական այդ մարտահրավերին, որ շարունակում է իրեն ձգել հանրակրթական դպրոցների շրջանավարտներին:**

- Քիչ առաջ ես թվեր ներկայացրի, չնայած ընդունելության գործընթացը դեռ չի ավարտվել: Այդ թվերով ինքներդ կարող եք եզրահանգում անել՝ մենք դիմանո՞ւմ ենք, թե՞ ոչ:

**- Ի՞նչ դժվարություններ, խոչընդոտներ, խնդիրներ կան քոլեջում, ընդունելության ներկա գործընթացում:**

- Ընդունելության ներկա գործընթացի դժվարությունները միայն մեզ համար չեն՝ ժողովրդագրական իրավիճակի փոփոխություն, մրցակցություն, տարածաշրջանի աշխատաշուկայի ոչ դիվերսիֆիկացված վիճակ…

Իսկ խոչընդոտներ, որպես այդպիսիք, չկան:

Մինչդեռ դժվարություններ կան, որոնք հաղթահարել եւ հաղթահարում ենք: Դրանք, կասեի, ընթացիկ հարցեր են:

Այդ ամենից զատ կան խնդիրներ, հիմնախնդիրներ:

Առաջինը, թեեւ առերեւույթ չի առնչվում քոլեջին, թաղամասի փողոցների ուղղակի քարուքանդ վիճակն է: Երկու տարի առաջ Հայկազունիների եւ Սեւյան փողոցների՝ քոլեջին հարակից հատվածը վերանորոգվեց, բայց թաղամասի փողոցների հարցը շարունակում է մնալ մտահոգող…

**- Դե Դուք էլ Գորիս համայնքի ավագանու ակտիվ անդամ եք, ինչո՞ւ խնդրի վրա չեք հրավիրում համայնքային իշխանության ուշադրությունը:**

- Այնպես չէ, որ համայնքային իշխանությունը տեղյակ չէ այդ խնդրին եւ մտահոգված չէ: Ե՛վ համայնքի ղեկավարը, և՛ ավագանին մտահոգված են դրանով: Խոսքը, մինչդեռ, ոչ թե փողոցների ընթացիկ, այլ հիմնովին նորոգման մասին է, որը բավականին լուրջ միջոցների ներդրում է ենթադրում, ինչը, բնականաբար, համայնքի բյուջեի հնարավորություններից վեր է: Բայց դա չի նշանակում, որ պետք է համակերպվել կացության հետ: Ընդհակառակը՝ պետք է հիշել, որ այդ թաղամասում են Գորիսի պետական համալսարանն ու Գորիսի պետական քոլեջը, Սերո Խանզադյանի տուն-թանգարանը, հանրակրթական երկու դպրոց եւ, ի վերջո, դա բնակելի մեծ թաղամաս է…

էջ 6

# ԹԵՐԵԶԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. «Հասարակության շրջանում պետք է բարձրացնել քոլեջների դերը»

էջ 1

**«Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա»-ն Կապանում ընդունելություն է կազմակերպել, ինչը հնարավորություն է տալիս նրանց միանգամից բարձրագույն կրթություն ստանալ»**, - տեղեկացրեց Թ.Միքայելյանը:

Ի դեպ, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան հիմնադրվել է 2001թ.՝ ՀՀ կառավարության 2001թ. հոկտեմբերի 15-ի N 978 որոշմամբ՝ նպատակ ունենալով Հայաստանում ստեղծել ժամանակակից ինովացիոն ծրագրերի ու եվրոպական չափանիշների կիրառմամբ գործող բարձրագույն ուսումնական հաստատություն: Այն ՀՀ միջպետական, շահույթ չհետապնդող հիմնադրամ է, որը, բուհական եւ հետբուհական կրթությունից բացի, առաջարկում է նաեւ եվրոպական չափորոշիչներին համապատասխան մասնագիտական վերապատրաստման եւ վերաորակավորման դասընթացներ: ԵԿՏԱ-ն պետության մասնակցությամբ բուհ է, ստեղծվել է եվրոպական մի շարք երկրների կրթական հաստատությունների հետ կնքված պայմանագրերի եւ համաձայնագրերի հիման վրա: ՀՀ կառավարությունը ԵԿՏԱ-ի հիմնադիր կողմն է: Ակադեմիան, ի սկզբանե հիմնադրվելով որպես տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտ, այսօր մասնագետներ է պատրաստում ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, այլեւ տնտեսագիտության, կառավարման, ֆինանսների, զբոսաշրջության, իրավագիտության, միջազգային հարաբերությունների, լեզվաբանության, հոգեբանության եւ կենսագործունեության անվտանգության բնագավառներում:

Այս տարի առաջին անգամ Կապանում ակադեմիան անց է կացնում ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների գծով՝ «Միջազգային տնտեսագիտություն», «Իրավագիտություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Կառավարում», «Մանկավարժություն եւ հոգեբանություն»: Առկա ուսուցմամբ ընդունելությունն ավարտվել է, իսկ հեռակա ուսուցմամբ ընդունելությունն ընթացքի մեջ է: Թերեզա Միքայելյանի հավաստմամբ՝ բավականաչափ դիմորդներ են ունեցել, առավել մեծ թվով շրջանավարտներ դիմել են «Իրավագիտություն» բաժնում սովորելու համար: Առկա ուսուցման տարեկան վճարը կազմում է 255 հազար դրամ, հեռակա ուսուցմանը՝ 230 հազար դրամ: **«Չնայած ուսումնական գործընթացը կկազմակերպվի Կապանում, բայց ընդունված դիմորդները Երեւանի ակադեմիայի ուսանողներ են, դասախոսությունները կկարդան այնտեղից հրավիրված եւ Կապանի լավագույն մասնագետները: Ի սկզբանե որոշել էինք երեք մասնագիտության գծով իրականացնել ընդունելությունը, բայց, դիմորդների շրջանում հետաքրքրություն նկատելով, ավելացրինք եւս երկու բաժին»**, - մանրամասնեց Թ.Միքայելյանը:

Տեղեկացնենք նաեւ, որ Եվրոպական քոլեջի, ինչպես նաեւ այլ քոլեջների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները կարող են ընդունվել ակադեմիայի 2-րդ եւ 3-րդ կուրս՝ համապատասխան բաժին: Ակադեմիան ավարտողները ստանում են բարձրագույն կրթության պետական դիպլոմ՝ բակալավրի աստիճան:

«Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում ընդունելությունն անց է կացվում հետեւյալ մասնագիտությունների գծով՝ «Տնտեսագիտություն, հաշվապահություն, աուդիտ», «Մենեջմենթ/կառավարում/», «Հաշվողական տեխնիկա / համակարգիչներ/», «Իրավագիտություն», «Թարգմանություն եւ գործավարություն», «Տուրիզմ»՝ 9-ամյա եւ 12-ամյա կրթության հիմքով, բացառությամբ «Իրավագիտություն» մասնագիտության, որ միայն 12-ամյա կրթության հիմքով, եւ «Թարգմանություն ու գործավարություն» մասնագիտության, որ միայն 9-ամյա կրթության հիմքով է իրականացվում: Կրթությունը կազմակերպվում է առկա ուսուցմամբ, վճարովի բաժիններում տարեկան վճարը կազմում է 120 հազար դրամ, դիմորդներն օգտվում են պետության սահմանած բոլոր արտոնություններից:

Ինչպես հավաստեց մասնաճյուղի տնօրենը, քոլեջի դիմորդների շրջանում շատ են «Տնտեսագիտություն, հաշվապահություն, աուդիտ» մասնագիտությունը նախընտրողները, իսկ որ զարմանալի եւ միեւնույն ժամանակ ցավալի է, «Տուրիզմ» մասնագիտության հանդեպ հետաքրքրվածությունը գրեթե բացակայում է. **«Ինչքան էլ բացատրական աշխատանքներ ենք կատարում, միեւնույն է, դեռեւս չենք կարողանում լիարժեք արդյունքի հասնել: Հատկապես մեր տարածաշրջանում տուրիզմը հեռանկարային ուղղություն է, բայց դպրոցի շրջանավարտները, կարծեք, դեռ չեն գիտակցում այդ մասնագիտության կարեւորությունը»**, - նշեց Թ.Միքայելյանը:

Քոլեջի շրջանավարտներն ուսումը կարող են շարունակել ոչ միայն ակադեմիայում, այլեւ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում, Գորիսի պետական համալսարանում, Ֆրանսիական համալսարանում:

12-ամյա կրթության պարտադիր դառնալը շատ կարեւորեց տնօրենը, իսկ այդ առումով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դերն էլ ավելի է բարձրանում. բացի հանրակրթական առարկաներից՝ սովորողը հնարավորություն ունի նաեւ զուգահեռ որեւէ մասնագիտության տիրապետել. **«Ինչքան էլ թույլ կարողություններ ունենա սովորողը, երեք կամ չորս տարվա ընթացքում անպայման մի բան կսովորի: Առհասարակ հասարակության շրջանում պետք է բարձրացնել քոլեջների դերը: Մեր ծնողների մեծ մասը տառապում է երեխային պարտադիր բարձրագույն կրթություն տալու «ցավով»: Պետք է հասնենք այն գիտակցական մակարդակին, որ կարեւորվի միջին մասնագիտական կրթություն ունենալը, որեւէ արհեստի տիրապետելը եւ այլն»:**

Հարցին, թե ինչպես կարողացան տարիների ընթացքում բարձրացնել իրենց քոլեջի վարկանիշը, Թերեզա Միքայելյանը պատասխանեց. **«Առաջին հերթին՝ որակյալ ուսուցմամբ, երկրորդ՝ ընձեռված հնարավորություններով, շրջանավարտների գործնական եւ տեսական պարապմունքների պատշաճ անցկացմամբ, երրորդ՝ հասարակության շրջանում տարած բացատրական աշխատանքներով»:**

Առհասարակ մասնաճյուղի տնօրենն այն կարծիքին է, որ քանակն է որոշում որակ, պետք է շատ թվով ուսանողներ ունենալ, որոնց միջից էլ լավագույններին պետք է առանձնացնել. **«Թույլ սովորողն ինքնուտինքյան մրցակցությունից դուրս կմնա»:**

Կարեւորվեց նաեւ ուսանողների պրակտիկաների կազմակերպման հարցում Կապանի լեռնահարստացման կոմբինատի, քաղաքում գործող տարբեր բանկային մասնաճյուղերի հետ համագործակցությունը: **«Որտեղ դիմում ենք պրակտիկայի անցկացման հարցով, ընդառաջում են, համապատասխան պայմաններ ստեղծում ուսանողների համար ստացած տեսական գիտելիքները պրակտիկայում կիրառելու համար»**, - տեղեկացրեց Թ.Միքայելյանը՝ հավելելով նաեւ, որ, բացի բուն ուսումնական պրոցեսից, ուսանողները նաեւ ակտիվ ուսանողական կյանք են վարում՝ մասնակցելով թե՛ քաղաքապետարանի, թե՛ մարզպետարանի նախաձեռնությամբ անցկացվող տարաբնույթ միջոցառումներին:

Մասնաճյուղի խնդիրներից խոսելիս տնօրենը նշեց. **«Հատկապես ակադեմիայի առումով պետք է ասեմ, որ այս պահին մեր առաջնային խնդիրը կայանալն է, իսկ վերանորոգման, համակարգչային ժամանակակից տեխնիկա ձեռք բերելու հարցերն ընթացիկ են եւ ժամանակի ընթացքում կլուծվեն: Այս պահին Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման պատճառով աշակերտների մի մասի ուսումնական գործընթացը նույնպես մեր շենքում է իրականացվում, բայց դա ժամանակավոր է, եւ պետք է աջակցենք միմյանց: Շենքային պայմանները բավարարում են թե՛ ակադեմիայի, թե՛ քոլեջի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Կադրերի համալրման հարցում նույնպես երբեմն խնդիրներ ենք ունենում, քանի որ Երեւանում ուսանած կապանցի շրջանավարտների ճնշող մեծամասնությունը չի վերադառնում: Օրինակ՝ այսօր մասնագետ-հոգեբան ենք փնտրում՝ ակադեմիայում դասավանդելու համար, եթե չգտնենք, ակադեմիայից կհրավիրենք: Հուսով եմ՝ մեր ակադեմիայի շնորհիվ շատերն այլեւս չեն մեկնի մայրաքաղաքում ուսանելու եւ այդպիսով գոնե մեր կադրերի մի մասին կպահենք այստեղ: Իսկ առհասարակ քոլեջում դասավանդում են համապատասխան կրթությամբ ու որակավորմամբ մասնագետներ»:**

Որպես ամփոփում Թերեզա Միքայելյանը մաղթեց մեր երկրին խաղաղություն, որ կարողանանք մեր սերնդին տալ որակյալ կրթություն. «Կուզենամ՝ հասնենք այն հանգրվանին, որ քոլեջի դերն այնքան բարձրանա, որ գան քոլեջում ուսանելու՝ արդեն առանց ծնողների, աշակերտների շրջանում համապատասխան բացատրական, խորհրդատվական աշխատանքներ անցկացնելու»:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**22 օգոստոսի 2017թ.**

# ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ. «Գորիսի պետական քոլեջում սովորել կամեցողները հիմա ավելի շատ են, քան՝ նախորդ տարիներին»

էջ 5

Անպայման պետք է խնդրի վրա բարձր իշխանությունների ուշադրությունը հրավիրել:

**- Մենք մի փոքր շեղվեցինք հիմնախնդիրները թվարկելուց, դառնանք Ձեր նկատառումներին:**

- Հաջորդ հիմնախնդիրը, որ մտահոգում է, քոլեջի շենքի պահպանությունն է, ջեռուցումը, քոլեջի շրջանավարտների աշխատանքի տեղավորումը եւ այդ նպատակով գործատուների հետ համագործակցության հետագա ակտիվացումը…

Թող տարօրինակ չթվա, բայց այժմվանից պատրաստվում ենք նաեւ մյուս՝ 2018-19 ուսումնական տարվան. նկատի ունեմ նոր մասնագիտությունների ներդրման գործընթացը, որ ենթադրում է պետական փաստաթղթերի պատրաստում, պահանջվող կադրերի խնդրի լուծում, ուսումնական բազայի ստեղծում. դրանք ամիսների համառ աշխատանք են ենթադրում:

**- Հիմա փորձենք ամփոփել մեր զրույցը. փաստորեն մինչեւ օգոստոսի վերջին օրերը դիմորդները կարող են քոլեջ ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ընդունելության հանձնաժողով:**

**Շատ պարզ հարց՝ հստակ պատասխանի ակնկալիքով՝ ինչո՞ւ պետք է ծնողն իր շրջանավարտ զավակին կրթության ուղարկի Գորիսի պետական քոլեջ, ինչո՞ւ պետք է հանրակրթական դպրոցի շրջանավարտն ուսման գա Ձեր կրթօջախ:**

- Այո, դեռ ժամանակ կա, եւ հանրակրթական դպրոցի շրջանավարտը (այս եւ նախորդ տարիների), բանակից զորացրված երիտասարդը կարող են որոշում ընդունել եւ սովորելու գալ Գորիսի պետական քոլեջ:

Հարցնում եք՝ ինչո՞ւ:

Նախ՝ մենք առաջարկում ենք ոչ միայն Գորիսի տարածաշրջանում, ոչ միայն Սյունիքի մարզում, այլեւ ամբողջ հանրապետության աշխատաշուկայում պահանջված մասնագիտություններ:

Երկրորդ, քոլեջում կա դասախոսների, վարպետների հմուտ, պատրաստված համակազմ, կա ուսումնաօժանդակ նյութերի անհրաժեշտ բազա, ինչը թույլ է տալիս երաշխավորել մասնագիտական գիտելիքների պատշաճ յուրացում, անհրաժեշտ հմտությունների ձեռքբերում: Նախկինում էլ առիթ եմ ունեցել ասել՝ մեր մանկավարժական թիմում կան դասախոսներ, ովքեր, առանց չափազանցության, պատիվ կբերեն ցանկացած կրթական հաստատության: Այսօր էլ այդ կարծիքին եմ:

Երրորդ, քոլեջում առկա է բարոյահոգեբանական լավ մթնոլորտ, ստեղծագործական աշխատանքի մթնոլորտ, որ կրթական գործընթացի գլխավոր գրավականն է:

Չորրորդ, քոլեջի շրջանավարտն ունի շարունակական կրթության հնարավորություն: Նա կարող է իր մասնագիտությամբ կրթությունը շարունակել հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ առանց ընդունելության քննությունների:

Հինգերորդ, մենք ունենք անվճար 136 տեղ (ներկա ընդունելության մասին է խոսքը), այդ թվում՝ 90-ը՝ արհեստագործական հոսքում: Դա նաեւ նշանակում է, որ սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքն իր երեխային կարող է կրթության տալ՝ չմտահոգվելով ուսման վճարով: Ավելին, երեխան նաեւ կրթաթոշակ կստանա՝ թեեւ համեստ չափով:

Ի վերջո պիտի նկատի ունենալ՝ Գորիսի պետական քոլեջը մեր հանրապետության ամենահին եւ վաստակաշատ կրթօջախներից մեկն է՝ բարի համբավ ունեցող, որտեղ տասնամյակների ավանդույթներին զուգահեռ ներդրվում եւ կյանքի են կոչվում ուսուցման արդիական մեթոդներ ու կրթական ժամանակակից չափորոշիչներ:

Այնպես որ՝ սիրելի՛ շրջանավարտներ, մենք սպասում ենք Ձեզ. թեեւ քիչ, բայց դեռ ժամանակ կա կողմնորոշվելու համար:

Գորիսի պետական քոլեջում դուք կստանաք բարձրորակ եւ պահանջված կրթություն, որը թույլ կտա արժանապատիվ տեղ գտնել կյանքում…

**Հարցազրույցը՝**
**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ**
**15 օգոստոսի 2017թ.**

# Կրթության վարչության պետի ոդիսականը...

էջ 3

Ի՞նչ է ստացվում. վարչության պետի պաշտոնը թափուր է, այդ պաշտոնի համար ունենք արժանավոր կադրեր (նկատի չունենք ինքնագովազդով տառապող կիսագրագետ պչրուհիներին), բայց նշանակում չի կատարվում:

Ըստ մարզպետարանի մեր աղբյուրների՝ դրա համար մի քանի պատճառ կա:

Նախ՝ ինքը՝ մարզպետը, լուրջ չի վերաբերվում մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ տեղակալ, աշխատակազմի վարիչ, վարչության պետ, բաժնի պետ... Այսինքն՝ որեւէ վարչության պետի լինելը կամ չլինելը գործնական առումով զրո նշանակություն ունի:

Մյուս կողմից՝ ոչ բոլոր արժանավոր կադրերն են ցանկանում աշխատել Վահե Հակոբյանի հետ: Ոմանք նրան ժամանակավոր ֆիգուր են համարում, մյուսներն էլ պնդում են, թե կրթության վարչության պետն իրականում կրթական գործի հետ կապ չունի, քանի որ այդ գործը համակարգում է մայրաքաղաքցի մի աղջիկ, եթե, իհարկե, խելքը զորում է:

Կա նաեւ երրորդ պատճառը. ինքը տեղացի կադրերին տանել չի կարողանում: Եվ միգուցե հարմար



պահի է սպասում (վերջին ամիսների դիմակազերծումից հետո), որ նորից իր մերձավորներին բերի Երեւանից:

Շրջանառվում է այլ կարծիք եւս. իբր ծտի խելքով ինչ-որ պչրուհու խոստացել է վարչության պետ նշանակել, բայց հանրային կարծիքից վախենում է, ինչի համար էլ տիկինն այլեւս արտասվելով է ելնում մարզպետի երջանկավետ աշխատասենյակից: Իբր հենց նրան կանաչ ճանապարհի տալու համար են Հովիկ Ալեքսանյանին Սիսիան ուղարկել:

Այդ ամենը, սակայն, թույլ չի տալիս եզրակացնել, որ մարզի հանրակրթական դպրոցները խնդրի առաջ են կանգնած կրթության վարչությունում ստեղծված վիճակի պատճառով: Ընդհակառակը՝ որքան մարզպետարանը քիչ միջամտի հանրակրթական դպրոցների գործունեությանը, այնքան արդյունավետ կլինի երեխաների ուսուցման եւ դաստիարակության գործը:

Այնպես որ՝ կարելի է նույնիսկ Գորիսի հայտնի բանսարկու տիկնոջը բերել վարչության պետ. նրան էլ ընտրությունների ժամանակ են խոստացել:

Կրթության վարչության պետի ոդիսականը վերը նշվածից զատ, մեկ այլ բան է նախեւառաջ վերահաստատում՝ Վահե Հակոբյանը հաջողությամբ տապալել է մարզպետարանի կադրերի ընտրության եւ տեղաբաշխման գործը:

Տեսեք՝ ամիսներ առաջ նախաձեռնեց փոխմարզպետ Վաչե Գրիգորյանի հաստիքի կրճատումը: Վերջինս, ի դեպ, մարզպետարանի ամենաինտելեկտուալ կադրերից էր՝ մարզպետից բոլոր առումներով հազար անգամ բարձր ու առաքինի: Նույն ժամանակ հանրապետության մեկ այլ մարզում փոխմարզպետի հաստիք ավելացրին:

Կրճատվեց (առանց հիմնավորումների) մարզպետարանի՝ մեր օրերում ամենապահանջված բաժինը՝ լրատվության եւ հանրության հետ կապերի բաժինը՝ տեղն առաջացնելով հսկայական մի ամայավայր: Մարզում ճանաչված լրագրող Արմինե Օհանջանյանը, ով այդ բաժնի ղեկավարն էր, դուրս մղվեց մարզպետարանից՝ տեղը զիջելով հայտնի մայրաքաղաքցուն:

Հայաստանի ամենախոշոր գյուղատնտեսական մարզ Սյունիքում գյուղվարչության ղեկավարը (գործող մարզպետի կողմից Սամվել Թանգյանի փոխարեն նշանակված) տասը ամիս շարունակ պաշտոնակատարի կարգավիճակում է (ասում են՝ գիտությունների թեկնածու Գագիկ Խաչատրյանը մի անգամ համարձակվել է ինչ-որ առիթով սեփական կարծիք հայտնել, թեեւ՝ կիսատ-պռատ):

Թափուր է մարզպետարանի քարտուղարության պետի պաշտոնը...

....Հոկտեմբերի առաջին օրերին լրանում է Վահե Հակոբյանի պաշտոնավարման մեկ տարին: Այդ առիթով, անշուշտ, անդրադարձներ ու ամփոփումներ կլինեն: Սակայն վաղուց արդեն արձանագրվում եւ ի ցույց է դրվում մի «նվաճում». նա կարողացավ մարզպետական իր պորփյուրի եւ Քաջարանի լեռնագործների ազնիվ աշխատանքի միջոցով տարածքային կառավարման սյունիքյան կառույցը ծածկել անլրջության եւ անպետքության քողով:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի դեռ մարզպետի համար Սյունիքը թշնամական տարածք է, ինչ-որ ուժերի կողմից օկուպացված եւ իրեն վստահված տարածք, որտեղ գրեթե բոլորը կասկածելի են ու անվստահելի...

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## «Վերջին երեխան ծնվել է երկու տարի առաջ... »

(տողագրվում է կրճատումներով)

Այսօր երեւանյան դպրոցներում մեծ շուքով կտոնվի Գիտելիքի օրը: Բայց ՀՀ մարզերի բազմաթիվ դպրոցներում, որոնց մեծ մասը գտնվում է գյուղերում, այս ուսումնական տարում ե՛ւ առաջին դասարանի աշակերտ չեն ունենա, ե՛ւ սեպտեմբերի 1-ի զանգը չի հնչի: Երկրում առկա արտագաղթն ու սոցիալական ծայրահեղ ծանր պայմաններն իրենց բացասական հետեւանքներն են թողնում նաեւ կրթական օջախների գործունեության վրա:

Ըստ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության՝ Հայաստանում սեպտեմբերի 1-ին դպրոց է այցելելու 40 հազար առաջին դասարանցի: Սակայն փորձը ցույց է տալիս, որ դպրոցների հաճախելիության հարցում առաջատարը մնում են խոշոր քաղաքներն ու Երեւանը: Մինչդեռ տարեցտարի ավելանում է այն գյուղերի թիվը, որտեղ դպրոցները փակվում են, կամ էլ նվազում է աշակերտների թվաքանակը:

Այսօր ՀՀ բազմաթիվ գյուղերում սեպտեմբերի 1-ը սովորական, ոչնչով չտարբերվող օր է լինելու, քանի որ որոշ գյուղերում դպրոց, իսկ մի մասում էլ գրեթե աշակերտ չկա:

Օրինակ՝ ՀՀ Սյունիքի մարզի 90 բնակիչ ունեցող Ճակատեն գյուղի դպրոցն այս տարի առաջին դասարանի աշակերտ չի ունենալու: Մինչդեռ անցած ուսումնական տարում առաջին դասարանի մեկ աշակերտ են ունեցել: Ճակատենի գյուղապետ Անդրյուշա Դավթյանի խոսքերով՝ գյուղն այժմ ունի ընդամենը 7 աշակերտ: «Երիտասարդ ընտանիք չունենք, որ երեխաներ ունենան: Անցած տարի ծնունդ ունեցել ենք, այս տարի՝ ոչ: Անցած տարվա ծնված երեխայի ծնողները մտադիր են գյուղից դուրս գալ, որովհետեւ աշխատանք չունեն, ոնց ապրեն: Աշխատատեղ չկա: Ամեն ինչի պատճառը աշխատանք չունենալն է», - մեծ ափսոսանքով նկատեց Ճակատենի գյուղապետը: Մեր զրուցակցի խոսքերով՝ Ճակատենի բնակիչներն անգամ չեն կարող հողագործությամբ զբաղվել, քանի որ իրենց հողատարածքները բերրի չեն, բացի այդ՝ ունեն ոռոգման ջրի խնդիր:

Նույն մարզի Արեւիս գյուղի դպրոցն ունենալու է առաջին դասարանի ընդամենը մեկ աշակերտ: Այս գյուղի դպրոցը նախորդ տարի նույնպես ունեցել է առաջին դասարանի մեկ աշակերտ: «Երեխա բերող չկա: Ժողովուրդ չկա: Գյուղն ունի ընդամենը 7 աշակերտ», - արձագանքեց Արեւիսի գյուղապետ Սասուն Սահակյանը:

Այսօր փակ է լինելու նաեւ Սյունիքի մարզի Շրվենանց գյուղի դպրոցը՝ աշակերտ չլինելու պատճառով: Մինչդեռ տարիներ առաջ այն ունեցել է 400 աշակերտ: Շրվենանցի գյուղապետ Արմինե Մանուկյանը «Ժողովուրդ»-ին փոխանցեց, որ իրենց գյուղի դպրոցը փակվել է ավելի քան 7 տարի առաջ, իսկ գյուղի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքները բնակություն են հաստատել Կապան քաղաքում:

Եթե արտագաղթի տեմպերն ավելի ահագնանան, ապա հաջորդ սեպտեմբերին կավելանա այն գյուղերի թիվը, որտեղ դպրոցները փակվում են, իսկ աշակերտների թիվը՝ նվազում: Բայց իշխող ՀՀԿ-ն չի զլանում կրկնել, թե ապահով երկրում ենք ապրում:

**Սյունէ Համբարձումյան**
**1 սեպտեմբերի 2017թ.**
**armlur.am**

## ԱՆԺԵԼԱ ՄԱՔՅԱՆ. «Մատչելի, հասանելի, որակյալ մասնագիտական կրթությունը՝ բարեկեցության եւ արժանապատիվ ապագայի երաշխիք»

էջ 4

**Տարեցտարի ավելանում է քոլեջի դիմորդների թիվը, ինչը, նախեւառաջ, պայմանավորված է հանրության մտածելակերպի փոփոխությամբ, ինչու չէ նաեւ 9-րդ դասարանն ավարտած շրջանավարտների՝ անվճար մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությամբ: Ակնհայտ է այն փաստը, որ բարձրագույն կրթություն ստացողներն ավելի շատ են հայտնվում աշխատանք փնտրողների ցուցակում, եւ նախընտրելի է դառնում միջին կամ նախնական մասնագիտական որակյալ կրթություն ստանալը եւ ողջ կյանքում մասնագիտական աշխատանքով ապահովվելը: Մտածելակերպի փոփոխություն կատարելն իրականում բարդ խնդիր է, քանի որ բարձրագույն կրթություն ստանալու ցանկությունը համակել է բոլորին՝ անկախ հնարավորություններից, ունեցած գիտելիքներից: Այսօր աշխատաշուկան ավելի որակյալ արհեստավորների, լավ մասնագետների մեծ պահանջարկ ունի, ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ եւ արժանապատիվ ապագա: Եվ այդ առումով գլխավոր շեշտը դնում ենք որակյալ մասնագիտական կրթության կազմակերպման, մասնագետ-կադրերի պատրաստման վրա»**, - նշեց տնօրենը:

Ուսումնական հաստատության վարկանիշի գրավականներից մեկն էլ նրա շրջանավարտների զբաղվածությունն է: Քոլեջում գործող կարիերայի կենտրոնն ամեն տարի ամփոփում է քոլեջի շրջանավարտների զբաղվածության ցուցանիշները, ուսումնասիրում, վերլուծում եւ համեմատում անցած տարիների տվյալների հետ: Ինչպես հավաստեց Ա.Մաքյանը, վիճակագրությունը փաստում է լուրջ առաջընթաց՝ արդյունքները բավականին գոհացուցիչ են, օրինակ՝ 2015-16 ուստարվա 103 շրջանավարտից 54-ն ունի աշխատանք, որոնցից 37-ը՝ իրենց մասնագիտությամբ, 17 հոգի աշխատում է հարակից մասնագիտությամբ: 12 հոգի կրթությունը շարունակում է ՀՀ պետական բուհերում: 2016-17 ուստարվա նախնական արդյունքներով 134 շրջանավարտից 63-ն ունի աշխատանք, որոնցից 34-ը՝ իրենց մասնագիտությամբ, 29 հոգի աշխատում է հարակից մասնագիտությամբ: 13 հոգի կրթությունը բուհերում շարունակելու ցանկություն է արտահայտել, ինչը վկայում է ճիշտ մասնագիտություն ընտրելու, առավել խոր մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու ցանկության, մասնագիտական աշխատանք ունենալու հեռանկարի մասին:

Այսօր հանրության շրջանում հաճախ կարելի է լսել քոլեջի ուսանողների հաճախելիության մասին իրարամերժ կարծիքներ: Այդ մասին խոսելիս Ա.Մաքյանը նշեց, որ նախեւառաջ խիստ վերահսկվում է հատկապես 9-ամյա կրթության հիմքով ուսանողների դասապրոցեսին ներկայությունը ոչ միայն կուրսղեկների, վարպետների, այլեւ տնօրենության կողմից: Սա պայմանավորված է նախ՝ նրանց տարիքային բարդ անցումային շրջանով: Ընդհանրապես քոլեջում սահմանվել են ներքին կարգապահական կանոններ, տարբեր պատճառներից ելնելով երրորդ նկատողություն ստանալուց հետո տվյալ ուսանողը հեռացվում է. օրինակ՝ 2016-17 ուստարում քոլեջից հեռացվել է 24 ուսանող: **«Չմոռանանք, որ մեր շրջանավարտների մի մասն էլ 18 եւ ավելի տարեկան է, ունի ընտանիք եւ պետք է սոցիալական խնդիրներ լուծի, ողջունելի է, իհարկե, նրանց սովորելու ցանկությունը, եւ այդ իսկ պատճառով երբեմն ընդառաջում ենք: Հերթափոխով աշխատող ուսանողների դասապրոցեսը կազմակերպվում է՝ հաշվի առնելով նրանց աշխատանքային գրաֆիկը: Առանձին դեպքերում թույլ ենք տալիս հաճախել նաեւ անհատական գրաֆիկով: Թույլատրելիության սահմաններում վերապահում ունենք նաեւ երկրորդ մասնագիտություն ստացող ուսանողների հանդեպ»,** - մանրամասնեց տնօրենը:

Առաջիկա անելիքներից խոսելիս Ա.Մաքյանը նշեց, որ հաջորդ ուստարում նախատեսվում է եւս երկու մասնագիտություն ավելացնել՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը, մարզի զարգացման հեռանկարները: «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամին դիմել են ավտոէլեկտրիկ մասնագիտության համար համապատասխան լաբորատորիա եւ սարքավորումներ ձեռք բերելու, կարճաժամկետ եւ երկարաժամկետ ուսուցման ծրագրեր կազմակերպելու համար: **«Մեր տարածաշրջանն ունի նաեւ վեբ դիզայների կարիք, ուստի հաջորդ ուստարում նախատեսվում է նաեւ այդ մասնագիտության ուսուցանում, ինչի համար կունենանք համապատասխան նյութատեխնիկական բազա եւ մասնագետներ: Առհասարակ ձգտում ենք ճկուն կրթական քաղաքականություն վարել. ամեն տարի մի նոր մասնագիտություն ներդնել՝ հաշվի առնելով ՄԿՈՒ համակարգի մրցակցությունը, մարզի առանձնահատկությունները, ժամանակի պահանջները»,** - հավելեց Ա.Մաքյանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# «Սպասի՛ր, այդ դո՞ւ ես...»



Գորիսի մանկական զբոսայգում հավաքվածներին հանդիպման վայրն ու ժամն էին մեկմեկու հուշում, որ իրենք համակուրսեցիներ են: Նրանք եկել էին քառասուն տարվա հեռավորությունից, եկել էին տարբեր ճակատագրերով ու վայրերից: Եկել էին Գորիս՝ իրենց ուսանողության օրրանը: Եկել էին տարիների փորձով իմաստնացած, կյանքի ճանապարհ անցած: Տարիներն աննկատ չեն անցել նրանց կողքով: Տարիները... Տարիները նրանցից յուրաքանչյուրին շատ էր փոխել արտաքնապես եւ մեկմեկու համար դարձել էին անճանաչելի: Եվ մեկմեկու ձեռք բռնելով, նրանք ուզում են հիշել-ճանաչել իրար, այդ դու չե՞ս՝ ասում էին նրանք մեկմեկու եւ «քրքրում» իրենց հիշողության «պահոցը»:

**- Այդ դու չե՞ս՝ Սիլվան:**

**- Այո, այդ ես եմ:**

**- Սպասիր, այդ դու չե՞ս՝ Ալվարդ:**

**- Ոչ, ես Ամալյան եմ:**

Եվ համբուրվում-գրկախառնվում են համակուրսեցիները՝ տարիների կարոտով, անբացատրելի գեղեցիկ, երիտասարդ տարիների վերհուշով: Ու նրանց ականջներում հնչում է սիրելի կուրսղեկ Արտավազդ Յոլյանի ձայնը՝ չխաբվեք Գորիսի տղաների գեղեցիկ պահվածքին: Սակայն «միամիտ» երկու աղջիկ չլսեցին սիրելի կուրսղեկին եւ ամուսնացան Գորիսում:

**- Դժգո՞հ եք,** - հարցնում եմ նրանց:

**- Բոլորովին:**

**- Ընկեր Յոլյանը ստուգում էր մեր ձեռքերի ափերը եւ ում ձեռքին կոշտուկներ կային, գովում էր եւ ասում՝ քեզնից լավ մարդ ու մասնագետ դուրս կգա: Նա իր հնարած «թեստով» էր որոշում մարդու լավ, աշխատասեր լինելը,** - ասում է Ջուլիետա Գրիգորյանը:

Ամալյա Ալեքսանյանն էլ թե՝ ընկ. Յոլյանը շատ էր հետեւում մեր հագ ու կապին, պահվածքին, ասելով՝ մանկավարժն ամեն ինչում պիտի օրինակելի լինի բոլորի համար, ով ձեւին հետեւում է, նա մոռանում է բովանդակության մասին, իսկ բովանդակությունն ամենակարեւորն է, ձեւը ժամանակավոր է, խաբուսիկ: Եվ նրանք գովում-գովում են Արտավազդ Յոլյանին՝ հիանալի մանկավարժին, մարդուն:

**- Նա հաճախ էր ասում՝ եթե ինձ թույլ տան, ես ձեզ մեկ տարի կտանեմ բարձրագույնում կնստեցնեմ եւ բուհի դիպլոմ կտամ, որովհետեւ դուք բուհում չորս տարի սովորելու պետքը չունեք, դուք բարձրագույնի լավագույն ուսանողի գիտելիքի չափ գիտելիք ունեք, -** ասում է Սիլվա Գալստյանը:

Գորիսի պետական քոլեջում (այն ժամանակ այս կրթօջախը կոչվում էր մանկավարժական ուսումնարան) դասավանդել են լավագույն մանկավարժներ: Նանցից մեկն էլ Օլյա Գիչունցն էր. բարձրահասակ, հումորով մանկավարժ էր նա:

**- Ընկեր Գիչունցը բանաստեղծությունն արտասանելիս մեծ ուշադրություն էր դարձնում մեր հնչերանգին, արտասանելու կուլտուրային: Նույնիսկ կային արձակ ստեղծագործություններ, որ չէինք կարդում, այլ արտասանում էինք, օրինակ Մովսես Արազու «Արեւը», -** ասում է Լենա Հակոբջանյանը:

Եվ խմբով, հենց զբոսայգում նրանք արտասանում են՝ լսում ե՞ք, սպասեք մի փոքր, ես ձեզ կպատմեմ բոլորը սկզբից, աղջիկս հիվանդ էր... Արտասանում եւ հուզվում են, ինչպես քառասուն տարի առաջ:

**- Դասի ժամանակ եթե պետք է, ուսուցիչը պետք է նույնիսկ գլուխկոնծի տա, որ աշակերտը թեման լավ յուրացնի, - ասում էր Գագիկ Հակոբջանյանը:**

**- Մեր բախտը բերել է, որ մեզ տաղանդաշատ, վաստակաշատ մանկավարժներ են դասավանդել, - ասում է Սիլվա Գալստյանը:**

Ու կրթօջախի 1977-78 ուստարվա շրջանավարտներն իրար հերթ չտալով, պատմում են իրենց մանկավարժների, իրենց ուսանողական տարիների մասին եւ այսօր նրանք հպարտությամբ ասում են՝ ես մանկավարժական ուսումնարանի դպրոցական բաժնի շրջանավարտ եմ: Այս կուրսում սովորել են երեսուներկու աղջիկ, նրանցից հինգը կարմիր դիպլոմ է ստացել, կուրսի մեծ մասն ընդունվել է տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ: Եվ նրանք պատգամ ունեն այսօրվա ուսանողներին՝ լավ սովորել, այնպես, ինչպես իրենք են սովորել: Մնայունը գիտելիքն է, որ մարդու այցեքարտն է ամբողջ կյանքի ընթացքում, պատասխանատվություն կրեն հայրենիքի համար, լինեն հայրենասեր, մեծատառով մարդ:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

# Զորաց քարեր. աստղադիտարա՞ն, թե՞ բնակավայր ու դամբանադաշտ

## «Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է հնագիտական արշավախմբի ղեկավար Աշոտ Փիլիպոսյանը

էջ 2

**- Եվ ո՞ր դարաշրջանի մասին է խոսքը:**

- Երեք-չորս տարի շարունակ մետր առ մետր ուսումնասիրել ենք եւ ուսումնասիրում ենք վերգետնյա նյութերը նույնպես:

Ամենահին մշակութային շերտը վերաբերում է մ.թ.ա. 20-18-րդ դարերին՝ միջին բրոնզի շրջափուլին: Ավելի վաղ շրջանին առնչվող որեւէ նյութական մշակույթի մնացորդ չունենք:

**- Բացի Ձեզանից եւ Ձեր արշավախմբից, ներկայումս ուրիշ ովքե՞ր են զբաղվում այս հուշարձանի ուսումնասիրմամբ:**

- Հուշարձանով եւ նրա մեգալիթյան կառույցների ուսումնասիրմամբ իրենց ծրագրի շրջանակում զբաղվում են Երեւանի պետական համալսարանի հնագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը, նույն ամբիոնի դասախոսներ Արսեն Բոբոխյանը եւ Արտակ Գնունին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը…

**- Հետաքրքիր է՝ կա՞ տարբերություն Ձեր եւ նրանց կարծիքների, տեսակետների միջեւ:**

- Հիմնականում նույն տեսակետն ունենք:

**- Փաստորեն այսօր ավարտում եք հնագիտական արշավախմբի այս փուլի աշխատանքները: Կարո՞ղ եք շատ համառոտ ամփոփել կատարված աշխատանքը, եզրակացություններ անել:**

- Աստղադիտարան կամ աստղագիտական տաճար հորջորջվող կառույցն իրականում ուշ բրոնզի դարին կամ շրջափուլին վերաբերող դամբանադաշտ է: Դամբարանը, որտեղ աշխատում ենք, ունի իր քարաշար կրոմլեխը, որը շուրջ 18 մ տրամագծով առանձնացված տարածք է:

Արեւմտյան կողմից սկսում է դամբարանի ստորգետնյա մուտքը (դրոմոսը), ձգվում է դեպի արեւելք 7 մ եւ ավարտվում ուղղանկյուն դամբանախցով, որի երկարությունը մոտ 6,5 մ է, լայնքը՝ մոտ 3 մ, խորությունը՝ 2,10 մ: Այդ դամբանախցում, իհարկե խառնված վիճակում, հայտնաբերվել են միջին բրոնզի դարաշրջանի, ուշ բրոնզի դարաշրջանի, երկաթի դարաշրջանի եւ աքեմենյան շրջանի նյութական մշակույթի մնացորդներ: Այսօրվա տվյալներով ունենք նաեւ երեք մարդու գանգի մնացորդներ (մարմինները չեն պահպանվել) եւ խոշոր ու մանր եղջերավոր անասունների մի քանի արկղ ոսկորներ՝ թաղման ծեսի ժամանակ զոհաբերված կենդանիների մնացորդներ:

**- Ի՞նչն է նոր կամ ուշագրավ այդ գտածոների մեջ:**

- Դամբանախցում հայտնաբերվել են նաեւ տասը բրոնզի ապարանջան, հինգ երկաթե նիզակ եւ մի արկղ բրոնզեդարյան, երկաթեդարյան խեցանոթների բեկորներ: Այդ իրերը կոնկրետ մշակութային պատկանելություն ունեն եւ որոշակի ժամանակ են ներկայացնում:

**- Կարելի՞ է եզրակացնել, որ հուշարձանը շարունակում է մնալ հնագետների ուշադրության կենտրոնում:**

- Մեգալիթյան այդ հուշարձանը, որ հայտնի է Դիք-դիք քարեր, Ցիցցից քարեր, Զորաց քար, Զորաց քարեր, Քարե զորք, Ղոշուն դաշ, վերջերս նաեւ Քարահունջ անվանական տարբերակներով, արդեն մեկ դարից ավելի ուշադրության կենտրոնում է: Հնագետներին հետաքրքրում են հուշարձանի դիրքը, տարածքը, ընդհանուր տեսքը, կառուցվածքային մանրամասները, տեղում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները եւ հատկապես ուղղահայաց կանգնեցված հսկա քարաբեկորների բազմությունը…

**Զրույցը՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**



Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 08.09.2017թ.: